

**«Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության» ծրագրի տեղեկատվական ամփոփագիր**

Վարկի առավելագույն գումար	<ul style="list-style-type: none"> <li>• Բնակարանների դեպքում՝ մինչև 7 մլն դրամ</li> <li>• Անհատական բնակելի տների դեպքում՝ մինչև 10 մլն դրամ</li> </ul>
Տարեկան տոկոսադրույքը	<p>14%, որից՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում վերանորոգվող գույքերի դեպքում տոկոսադրույքն ամբողջությամբ սուբսիդավորվում է</li> <li>• սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրերում վերանորոգվող գույքերի դեպքում սուբսիդավորվում է 12%-ը (հաճախորդը վճարում է 2%)</li> <li>• սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրերում վերանորոգվող գույքերի դեպքում սուբսիդավորվում է 11%-ը (հաճախորդը վճարում է 3%)</li> <li>• Երևան քաղաքում վերանորոգվող գույքերի դեպքում սուբսիդավորվում է 9%-ը (հաճախորդը վճարում է 5%)</li> </ul>
Վարկի ժամկետ	Մինչև 84 ամիս
Շահառուներ	Հայաստանի Հանրապետությունում սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով բնակարան (բնակելի տուն) ունեցող ՀՀ քաղաքացիներ
Վարկի սահմանաչափի հաշվարկման կարգ	<ul style="list-style-type: none"> <li>• բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգման դեպքում՝ 1 քմ-ի հաշվարկով 70 հազ. դրամ, բայց ոչ ավելի, քան 7 մլն դրամը,</li> <li>• անհատական բնակելի տների համար՝ 1 քմ-ի հաշվարկով 100 հազ. դրամ, բայց ոչ ավելի, քան 10 մլն դրամը</li> </ul>
Վաղաժամկետ մարման տույժ	Տույժեր առկա չեն
Էներգաարդյունավետության միջոցառումների նվազագույն շեմ (վարկի ընդհանուր գումարի մեջ)	<ul style="list-style-type: none"> <li>• բնակարանների դեպքում՝ 20%</li> <li>• անհատական բնակելի տան դեպքում՝ 30%</li> </ul>
Սպասարկման վճար, միջնորդավճար	Բացակայում են
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ, ընդ որում բոլոր ծախսերի առնվազն 70%-ը պետք է իրականացվի անկանխիկ եղանակով, իսկ բոլոր ծախսերի առնվազն 80%-ը և էներգաարդյունավետ ծախսերի 100%-ը պետք է հիմնավորվեն համապատասխան վճարումը հավաստող փաստաթղթերով
Ապահովություն	Վերանորոգվող անշարժ գույք

\*Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներն են՝ էներգիայի այլընտրանքային աղբյուրների, օգտագործվող էներգաարդյունավետ շինարարական նյութերի, էներգախնայող ջեռուցման համակարգերի, արտաքին դռների և պատուհանների ձեռքբերումը, տեղադրումը կամ փոխարինումը, իսկ անհատական բնակելի տան դեպքում՝ նաև արտաքին պատող և պարփակող կոնստրուկցիաների ջերմամեկուսացումը

\*\*Մեկ բնակարանի (բնակելի տան) համար ծրագրի շրջանակներում իրականացվում է միայն մեկ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում

\*\*\*Վարկի գործողության ընթացքում աջակցության ցուցաբերումը դադարում է՝

1) վարկի ամբողջական մարման դեպքում

2) շահառուների կողմից ծրագրի իրականացման կարգով սահմանված պահանջների խախտման դեպքում

\*\*\*\*Օրագրով հնարավորություն է տրված նաև վարկավորման գումարի մինչև 10%-ի չափով ձեռքբերել A+ և բարձր դասի

էներգաարդյունավետ կենցաղային տեխնիկա

\*\*\*\*\*Վարկերը տրամադրվելու են միայն Երևան քաղաքում և հարակից բնակավայրերում գտնվող բնակարանների (անհատական բնակելի տների) վերանորոգման նպատակով